իսկ գործունէութեան շրջանները՝ Նախիջեւան, Գողթան եւն.:

Միւս կողմից՝ հայ Լուսաւորչական հոգեւորականութեան միջից էլ նրանց դէմ դուրս եկան արժանաւոր ախոյեաններ՝ Եսայի Նղեցի, Յովհան Որոտնեցի, սրա աշակերտը՝ Գրիգոր Տաթեւացի, եւն.: Յետագայում Միքայել Դոմինիկեանների վրայ աւելացան Հայաստանում քարոզիչներ նաեւ ուրիշ կարգերից — Օգոստինեան, Կարմելեան, Կապուչինեան, Յիսուսեան եւն.: Այսպիսով սկսուեց մեր երկրում մի զօրեղ պայքար կաթոլիկութեան եւ լուսաւորչականութեան մէջ՝ յանուն հայ ժողովրդի հոգու փրկութեան:

Միսիոնարների ներկայութիւնը վերջ ի վերջոյ մի չարիք էր մեր երկրում եւ դժբախտութիւն հայ ժողովրդի համար, որովհետեւ նրանք անվերջ խռովութիւնների ու պառակտման պատճառ դարձան, դրանով էլ աւելի թուլացնելով մեր առանց այն էլ թոյլ հաւաքականութիւնը: Բայց եւ չպիտի ուրանալ, որ նա եղաւ նաեւ մի բարիք՝ Հայաստանի անկախութեան գաղափարի տեսակէտից, որովհետեւ, ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք՝ քարոզիչները խոշոր դեր խաղացին այդ գաղափարի հրահրման գործում:

Սկզբում, երբ նրանց յետին նպատակները դեռ եւս բոլորովին քօղաղերծ չէին արուած, հայ ժողովրդի վերաբերմունքը դէպի կաթոլիկ քարոզիչները բաւական բարեկամական էր: Դրա պատճառը ամենից առաջ այն է, որ ապրելով մահմեդական ծովի մէջ եւ մահմեդական բռնակալութեան ներքոյ, հայերը բնականաբար սիրով պիտի ընդունէին «իրենց համար» արեւմուտքից եկած այդ քրիստոնեայ եղբայրներին եւ ամէն կարգի աջակցութիւն ցոյց տային նրանց:

Միւս կողմից՝ նրանք՝ կաթոլիկ քարոզիչները, կանգ չառնելով ոչ մի միջոցի առջեւ, անգամ դրպարտութեան ու կաշառքի, կարողանում էին համակիրներ ու բարեկամներ շահել, եւ հետեւաբար նաեւ ազդեցութիւն ձեռք բերել: Դրա հետ միասին՝ նրանց գործունէութեան մէջ կային որոշ դեղեցիկ բաներ, որոնք չէին կարող համակրութիւն չգտնել ժողովրդի կողմից. այսպէս, հիմնում էին դպրոցներ, հրատարակում էին գրքեր, հնարում էին զանազան խաղեր — օրինակ լոտոի նման — կրօնական ուսուցման նպատակով, ճանապարհորդում էին կարաւանների հետ՝ նրանց օգնելու եւ ճանապարհներին քարոզելու համար եւ այլն: Մանաւորապէս նրանց հմտութիւնը որոշ գիտութիւնների մէջ, մանաւանդ բժշկութեան եւ վիրաբուժութեան, ժողովրդին հասցրած ձրի բժշկական օգնութիւնը — սրանք հանգամանքներ են, որոնք հայ ժողովրդին լաւ էին տրամադրում դէպի կաթոլիկ քարոզիչները:

Այդ ընդհանուր վերաբերմունքով պիտի բացատրել այն, որ նոյնիսկ լուսաւորչական հոգեւորականութիւնը այնքան բարեհամ եւ սիրալիր էր դէպի նրանց, որ թոյլատրում էր լուսաւորչական եկեղեցիներում ժամերգութիւն կատարել, քարոզ խօսել եւն.: Իսկ նրանք այդ համակրութիւնը համարելով հակամիտութիւն հայ ժողովրդի կողմից դէպի կաթոլիկութիւնը կամ պատրաստակամութիւն կաթոլիկութիւն ընդունելու, իրենց գործողութիւնների մէջ դառնում էին աւելի վճռական, աւելի յանդուգն: Շատ անգամ դիմում էին կառավարութեան՝ նրա միջոցով բռնութեամբ հայ լուսաւորչականներին դաւանափոխ դարձնելու, որով ուրեմն, հայ ժողովրդի տանջանքների վրայ նոր տանջանքներ էին աւելացնում, նոր հալածանքներ ստեղծում:

Պէտք է ասել, որ միսիոնարները հսկայական ազդեցութիւն եւ կշիռ ունէին մանաւանդ պարսկական կառավարութեան մօտ, հետեւապէս, նրանք շատ բան կարող էին անել — եւ անում էին — հայ ժողովրդի դրութեան վատթարացման տեսակէտից:

Նրանց ազդեցութեան պատճառները, մանաւանդ պարսից արքաների վրայ, մէկից աւելի էին.—

Ամենից առաջ՝ որ միսիոնարներից շատերը սոսկական քարոզիչներ չէին միայն, այլ դրա հետ միասին նաեւ այս կամ այն եւրոպական պետութեան ներկայացուցիչը Պարսկաստանում: Շատերն էլ եթէ այդ յոյժ կարեւոր պաշտօնական հանգամանքը չունէին, բայց դոնէ ունէին յանձնարարական թղթեր այս կամ այն պետութիւնից եւ վայելում էին նրանց հովանաւորութիւնն ու պաշտպանութիւնը: